ժամանակակից պատմագրության մեջ «ոստիկան» բառը կարելի է օգտագործել միայն պայմանականորեն, ճիշտ այնպես, ինչպես Բյուզանդիա անունը՝ Արևելահռոմեական կայսրության համար։

Այսպիսով, «ոստիկան» բառը արաբական տիրապետության ժամանակ արաբ կառավարչին բնորոշ մի բառ չի եղել, այլ միայն հետագայում՝ Բագրատունյաց տիրապետության ժամանակ է մտել պատմագրության մեջ, շնորհիվ Հովհաննես Դրասխանակերտցու։

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԻՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետրոս Առաջինի մասին, ինչպես հայտնի է, ռուս ժողովրդի մեջ ստեղծվել և տարածվել են բազմաթիվ երգեր, զրույցներ, հեքիաթներ ու ավանդություններ։ Հայ ժողովրդի մեջ ևս նրա մասին շատ վաղուց ստեղծվել է հեքիաթախառն մի զրույց, որը իր ժամանակին գրի է առնված եղել Լազարյան տոհմին վերաբերող, Տաթևի վանքում պահվող հայերեն մի ձեռագրում, որը 1850 թ. ընդօրինակել է բանահավաք Ասլան Աթաբեկյանը և ուղարկել Մոսկվա՝ Լազարյան ճեմարանի դասախոս բանասեր Մսեր Մսերյանին, հրատարակելու համար։ Ավանդությունը, սակայն, չի հրատարակվել և այժմ պահվում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան Պետական Մատենադարանի Մսերյանների արխիվում (թղթ. № 208, վավ. № 2267)։ Զրույցի անվանաթերթի վրա Ա. Աթաբեկյանը գրում է. «Թղթահամարոց 70 արձանագրութեան սրբոյ վանաց Տաթեւոյ, ճառ ի մէջ վանօրէից արձանագրութեան Հայաստանու գրեալ է արձանագրութիւն անուն մեծագործ ազգին Լազարեանոյ սակս որոյ արտասանեալ գրեալ եմ ի մէջ ժողովեալ արձանագրութիւն իմոյ, որպէս և ունի/մ/ր և ընթեռնուլն վերահասու լինիլ»։

Զրույցի սկզբում պատմվում է, որ առևտրական նպատակներով եվրոպացիների, այդ թվում հոլանդացիների, մոտ միտք է հղանում նոր երկրներ և ժողովուրդներ գտնել։ Նրանք նավերով գնում են երկրագնդի զանազան կողմերը և հայտնաբերում նոր կղզիներ, նոր ժողովուրդներ և նրանց հետ առևտուր անում։ Հոլանդացիները, շարունակելով իրենց ճանապարհը, հասնում են Հնդկաստան, այնտեղ ծանոթանում են հայ վաճառականների հետ և առևտրական հարաբերությունների մեջ մտնում։ Օգտվելով հոլանդացիների բարեկամությունից, հայ վաճառականները տեղափոխվում են Հոլանդիա, առևտրական ընկերություններ հիմնում ու եվրոպացիների հետ առևտուր անում մինչև Պետրոս Առաջինի Հոլանդիա գնալը (1697)։

Այնուհետև զրույցում պատմվում է, թե իբր Պետրոս Առաջինը ծպտված գնում է Հոլանդիա՝ արհեստներ և նավաշինություն սովորելու։ Հոլանդացիները ճանաչում են նրան և բանտարկում։ Բանտից Պետրոսին ազատում է Մարկոս Միրզախանով անունով հայ մի վաճառական, որը Պետրոսի հրավերով մտնում է նրա խուցը, փոխում նրա հետ իր հագուստը, իսկ Պետրոսի փոխարեն մնում խցում և այդպիսով ազատում նրան։ Այդ մասին ձեռագրում ասված է.

«Այսմ ժամանակի եղև շշունջ ի մէջ հոլանդացոց, որպէս թէ մեծն Պետրոս կայսերն ասասաց անծանօթս եղեալ և մտեալ ի Հոլանդեայ վասն որոյ տէրութիւնն նոցա, հրամայեաց, որ ծածուկ, որպէս և իցէ, ընդունել զնա և կալանաւորել։ Որ և յաւուր միում ի գնալն մեծին Պետրոսի ի շուկայս, պատահեցաւ նմա հոլանդացի ումն ու առեալ զնա պատուով տարաւ ի նա օրախտի՝ յանձնեալ պահապանացն և ինքն հեռացաւ։ Յայնժամ զգայացաւ մեծն Պետրոս, թէ հանկարծակի կալանաւորեցաւ, ապա սկսաւ ճեմել ի մէջ օրախին այսկոյս և յայնկոյս, յետ նետս ի լուսամուտն զոմն օտարական. որ երթայր ի փողոտայս, և մեծն Պետրոս իսկուն բարձեալ զլուսամուտն և նշանացի հրաւիրէ զնա ի ներքս։ Ի մտանել օտարականին հետ ողջունելոյ, հարցանելով մեծն Պետրոս, թէ՝ «Ո՞վ ես, կամ ի՞նչ գործ ունես». ասէ օտարականն «Ես եմ այս վաճառական, եկեալ ի յարևելից և ունիմ ասա առևտուրս, նաև կամ ընկերութիւնս, այսինքն՝ կամպանիայս։ Հարցանէ կայսերն թէ՝ «Ի՞նչ ազգ ես»։ Պատասխանէ օտարականն. «Ազգաւ հայ եմ, անունն իմ Մարկոս Միրզախանով»։ Հարցանէ թագաւորն թէ՝ «Լսա՞ծ ես Մոսկվայ թագաւորն տեղս այս»։ Պատասխանէ այրն. «Այո, լսած եմ»։ Ասէ մեծն Պետրոս. «Որովհետև հայ ես, ունիմ ինչ խորհուրդ բեղ յայտնելոյ ու ինձ հաւատացուր ոչ ումեք չյայտնիլ»։ Ասէ Մարկոս.

«Թէ որ ինձ վնաս չի վերարերի, ոչ եմ յայտնելոց»։ Ասէ թագաւորն. «Ոչ թէ վնաս, այլ փոխարէնն քեզ և քու ազգին բարութիւն կանիս»։ Վասն որոյ հաւատացուցեալ պարոն Մարկոսին թագաւորն և ապա յայտնէ նոյնժամայն թէ «Ես ինքս եմ Պետրոս»։ Եւ պարոն Մարկոսն յորժամ լուաւ զո որ լինելն, նոյնժամայն սկսաւ պատկառանօք հետզհետ կանգնել ինքանէ։ Ասէ մեծն Պետրոս. «Որովհետև խոստացար ինձ խորհրդապահ լինել, այժմ կարիք օգնել զիս (դուրս ելանել) աստի»։ Պատասխանէ Պարոն Մարկոսն. «Որպիսի՞ օգնութիւն կամիր, դի առնիցեմ»։ Ասէ մեծն Պետրոս. «Տուր ինձ զվերարկուս հանգերձիդ և թուղթ ի վրայ գործակատարին քոյ՝ վասն դրամի ու հաւի, որ ինձ Արխանգելս ճանապարհի»։ Առնալ թուղթն ու վերարկուն, ինքն չու ելանէ արտաքս։

Ի մէջ այսպիսի խօսակցութեան մեծին Պետրոսի ընդ Մարկոս Միրզախանովին, զարուն օրախին փոխնալ յայնժամ, որ վասն ժամ բարեպատեհ գտնալ մեծին Պետրոսի, ելնալ փութով, երթայ առ գործակատարն պարոն Միրզախանովին՝ մատուցեալ թուղթն գործակատարին։ Եւ նա առնալ ի թուղթն, ճանապարհէ զնա Արխանկել»։

Հայ վաճառականը թյուրիմացության մեջ գցելով հոլանդական կառավարության, ինքը նույնպես ազատվում է բանտից և գնում Պետերբուրգ, ապա Մոսկվա։ Պետրոս Առաջինը ջերմորեն ընդունում է նրան և տանում Պետերբուրգ իր պալատը, ամուսնացնում է նրան ռուս մի աղջկա հետ և ինքն էլ նրանց բավորը դառնում, ապա մեծ արտոնություններ տալիս հայ վաճառականներին՝ Ռուսաստանում առևտուր անելու։ Մարկոս Միրզախանովի և նրա ռուս կնոջ թոռներից մեկը՝ Եկատերինան, ըստ զրույցի, ամուսնանում է Հովհաննես Լազարյանի հետ։ Ահա ձեռագրի համապատասխան հատվածը։

«Յետ այսու առնալ զՄիրզախանովին տանէն առ կօրոլն իւրեանց։ Եւ կօրոլն տեսանելն Միրզախանովին, ըստ պատահման զոլն հերաց ու գծագրութիւնն դիմաց մեծն Պետրոս ընդ Միրզախանովին նմանելին, այսու զերծաւ Միրզախանովն ի կօրոլէն։ Ի ելանելն մեծին Պետրոսի ի Հոլանդիու և նաւել ի Արխանկել, ի Արխանկելու սլացեալ դառնալ նորակերտ քաղաքն իւր (այսինքն Պետերբուրգայ) ու սկսել հրատարակել հանգերձ հրաւիրելովն վաճառական։ հաստատելով ազատ մաքսարանի։ Եւ այսու զբաղեալ լինի տնտեսական հոգացողութիւն հաստատելով հրաւիրեցեալ աշխարհ հիւրանոցն կայանս ի մէջ սենատուջ՝ սակս ասպնջականութիւն հիւրոցն։ Զկնի որոյ զբաղալ այլ և այլ գործս իւր կարգադրութեան, և կարգել ի տեղի իւր իշխանս ու հրամանատարս և ինքն դառնայ ի Մոսկով։ Եւրոպացիքն լսելով համբաւն հրաւիրման ամենայն կողմիցն սկսան նաւերով կալ հանգերձ վաճառօք և վաճառականօք։ Որոյ լուալ հրաւիրումն ազատ մաքսարանի Պետերբուրգայ վոտահացեալ պարոն Մարկոս Միրզախանովին, նստելով նաւ ի Հոլանդիու, գայ ի Պետերբուրգ, տեսանելով նորակերտ քաղաքն անհարմար ըստ իւրում դատողութեան, նաև չունելն ի Մոսկով, մեծն Պետրոսի ինքն ևս հարկադրեցաւ երթալ ի Մոսկով՝ սակս երկու իրաց, այսինքն՝ թէ կարիցէ ընդ հայոց ազգին յարկերութիւն հաստատել, այսինքն կամպանիայ։ Եւ երկրորդ՝ ի տեսութիւն կայսրին։ Եկեալ ի Մոսկով, դտանէ ազգէ հայոց։ Ըսկսի բարեկամանալ և խնդրել նոցա խորհուրդ, թէ՝ «Որպէս կարիցէ կայսերն տեսանել»։ Ու նորա ասեն՝ «Այս աւուր կայսերն երթեալ է աւագ եկեղեցին իւրեանց, ի աւարտել պատարագին՝ ելանելոց է ի Գրեմլայէ, որոյ բազմութիւնք ժողովեալ ի ճանապարհի սպասելին զնա, որոյ և դու կարես գնալ և ի մէջ բազմութեան և տեսանել անդ զնա»։ Որոյ անցանելն՝ կայսերն ընդ կայսրուհոյն ի մէջ բազմութեան, ի խոնել ժողովրդեան, տեսանել կայսերն միում անկանիլ, իսկոյն կայսերն կա։ առնի և բանայ դուռն կառացն և տեսանել մարդ միում անկեալ յերկիր։ Բուռն հարեալ հարուցանէ զնա։ Տեսանել այն ինչ զի բարեկամն իւր պարոն Միրզախանովն։ Առնալ, դրկելով նստուցանել կառս, հանձնելով թագաւորոյն և ասել. «Ահա բարեկամն իմն, որ երկնրումն որոնելով, երկրումս գտայ»։ Եւ առեալ տարան ընդ իւրեանս, ուր հրաւիրեալն էին կայսերն և կայսրուհին։ Եւ նա հաչելոյ, վերադարձան ի պալատս իւրեանց։ Յետ քանի աւուրց անցանելոյ, Միրզախանովն խնդրել կայսրէ արձակումն՝ բանիցս անդամ կրկնելով ասել կայսերն. «Յետ երից ամսոյ երթալոց եմք ի Պետերբուրգ և միասին երթամք»։ Եւ կալոյ Պետերբուրգ, կրկին քանիցս անդամ թախանձէ արձակումն իւր։ Եւ կայսերն ասել. «Ես կամիմ քանի տուն Հայոց գերդաստանք հրաւիրեմ Պետերբուրգ՝ բնակելոյ և դու կամիս յիններն փախչիլ»։ Հարցանէ կայսերն «Ամուսնացեալ ես, թէ ոչ»։ Պատասխանէ՝ ոչ։ Վասն որոյ հրամայէ ածել քանի մի ի պալատական օրիորդաց և կացուցանել առաջի նորա և ասել. «Ընտրեա մին ի սոցանէ, ահա ես քեզ տամ, քեզ փեսակեմ այսու պայմանաւ՝ թէ արու դաւակ լինի՝ հայ մկրտի, իսկ թէ դուստր՝ ռուսաց դաւանութեանն»։ Ինքն կայսերն խաչ փոխելով կնքահայր դառնայ։ Որոյ ծնանին՝ որ են թոռունք. Յակոբ Միրզախանովն է

երկու։ Եղբայրք նորա և երկու քոյրք. այսինքն Եկատերինէն Իվանովնայն, որ եղև ամուսնացեալ ընդ աղա Յովհաննէս Լազարեանին[1], և երկրորդ քոյրն ամուսնացաւ ընդ Բեհբիթով իշխանին ռուսաց։ Ի իգական դէմ ծնաւ Ակրաֆինայ Միխայլովնայ Բալկով»։

Ավանդության վերում պատմվում է այն մասին, որ թագավորը նավով գնում է դեպի Աստրախան, հասնում հնություններով հարուստ ավերակ Բուլղար քաղաքին, շրջում. ուսումնասիրում հնությունները և այնտեղ գտնում արևելյան լեզուներով գրված տապանաքարեր, որոնք ընդօրինակել է տալիս և պահում իր մոտ։ Նա հետո գնում է Աստրախան։ Աստրախանցիները, այդ թվում նաև հայերը, սիրով դիմավորում են նրան։ Նա հայերին հրավիրում է Մոսկվա և Պետերբուրգ։ «Զկնի ժամանակաւ,—կարդում ենք ձեռագրում,—չուի երանելի կայսրն նաւով ընդ Վոլկայ գետ դէպի Աշտարխան։ Եկեալ հասանէ հին աւերակ Բուլղար քաղաքին, ելեալ ի նաւէն ըստ իւրումն տենչասիրութեան, շրջէ ի քաղաքում գտանէ հնդստութիւնս։ Եւ անդ գտանէ յխտին տապանաքար հարևելեան լեզուով գրեալ, որոյ օրինակեալ պահէ առ իւր։ Եւ անտի երկին ելեալ նստի ի նաւս, ձանապարհէ մինչև ի յԱշտարխան։ Եւ ընկալեալ զնա յԱշտարխանցիքն. մանաւանդ Հայոց ազգն, որոյ վասն մեծ գործնականութեամբ շնորհակալ եղև մեծ շնորհ ողորմութիւն խոստանալով։ Հրաւիրէ Հայոց ազգին ի Մոսկով կամ Պետերբուրգ, որոյ ասկս նշան իւր գթութեան և ողորմութեան, եղև կնքահայր քանիցս Հայոց»։

Պետրոս Առաջինի մասին հայ ժողովրդի մեջ ստեղծված այս զրույցը մի նոր ապացույց է այն մասին, թե որքան ուժեղ է եղել ռուսական օրիենտացիան հայ ժողովրդի մեջ։

Ս. ԱՓԱՄՅԱՆ

---

[1] Զրույցի այս մասը պատմական իրողություն է։ Մ. Մսերյանը իր «Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմին» (Մոսկվա, 1856) աշխատության 17-րդ էջում նշում է, որ Հովհաննես Լազարյանի կինը՝ Կատարինեն (1750—1819) սերվել է Միրզախանովների տոհմից։